Մխիթարի աբբայութեան շրջանը դեռ սկզբնաւորութիւնն էր, զարգացման առաջին աստիճանը, սաղմնային դրութիւնը։ Դա կէս դարի մի շրջան էր։ Մխիթարի մահուանից յետոյ սկըսւում է միաբանութեան նոր, երկրորդ շրջանը, որ նոյնպէս կէս դար է շարունակւում։ Այդ շրջանին մենք կը վերադառնանք յետոյ։ Իսկ այժմ մենք պիտի տեղափոխուենք Արևելեան Հայաստան և տեսնենք թէ ինչեր էին կատարւում այնտեղ։

Լ. Օ

(Կը շարունակուի)

---

*
* *

(Ն ե կ ր ա ս օ վ)

Օ, երգե՛ր, երգե՛ր, աշխարհի նամար
Թափած արցունքիս վկա՞յ կենդանի,
Դուք ծնւում էք միշտ ծանր ժամերին
Հոգուս մէջ կիտուած փոթորիկների,
Եւ զարկւում մարդկանց կարծր սրտերին,
Որպէս ալիքը ժայռին ամայի։

Կ. ԿՐԱՍԻՂՆԻԿԵԱՆ